



« ԹՈՎ ՑՈՒՆԻՔ ՄԱՆԸ ՑԿՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ » : ՂՈՒԿ. ԺԸ. 16 :

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ . ՆՈՅՆԵՐԻՐ 1 . 1875 .

ԹԻՒ 11



« ԿՐԱԿԻ ԿԱՑԾԵՐ ԴԻՉԵԼ »

Վերի պատկերին մէջ Մարիամ այնչափ արտում կ'երեւի որ կարծես թէ լացած է : Եւ արդարեւ Մարիամ լացած ալ էր :

Ա.յն ցասկոտ մարդը, Յակոբ աղա, որ Մարիամի հօր պարտէզին ծայրը կը բնակէր, զաւակ չունէր, և մինակ ապրած ըլլալուն քիչ մը անգութ էր : Ա.յն առաւօտ Մարիամին սպիտակ

չնիկն երկար ատեն հաճած էր պատին վրայ դանուռ կատուին դէմ. Յակոբ աղա ասոր վրայ բարկանալով քարով մը զարկաւ, չնիկը սպաննեց : Մարիամ իր չնիկը շատ կը սիրէր, ուստի լացաւ անոր մահուան վրայ, և խորհեցաւ որ Յակոբ աղային այս անգթութեան համար զանի պատժելու բան մ'ընէ : Եւ ինքնիրեն բարկութեամբ ըսաւ . « Երբ Յակոբ աղա չուկայ երթայ, ես

ալ իր պարտէզը կ'երթամ, և անոր բոլոր վարդերը կը փրցնեմ և ծաղիկներն ստնակոխ կ'ընեմ : » Մայրը զանի յանդիմանելով հրամայեց որ նստի և Առակաց Իճ գլուխը կարգայ, որպէսզի հոն իրեն օգտակար դաս մը տեսնէ և սովորի :

Մարիամ չուզելով հնազանդեցաւ մօրը, ինչպէս որ դէմքէն ալ յայտնի է. բայց երբ մայրն անոր ուշադրութիւնը Առակաց այն գլխոյն 21 և 22 համարներուն վրայ հրաւիրեց, այն ատեն Մարիամ ալ հասկցաւ մօրը միտքը : Մայրն անոր հարցուց. « Ասոր փորձն ընել կ'ուզե՞ս : » Մարիամ ըսաւ, « Չեմ կարծեր որ այս փորձը Յակոբ աղային վրայ աղէկ ազդեցութիւն ընէ : » Մայրը կրկնեց, « Աղէկ, գուն հիմա ըսածս ըրէ և պիտի տեսնենք : »

Ա.յն շարժին և հետեւեալ շաբաթները Մարիամ ասոյն գործութեամբ զբաղեցաւ : Քիչ ատենէն Մարիամ երկու հողաթափի երես դործեց, և զանոնք կօշկակարին տանելով զոյգ մը գեղեցիկ հողաթափ շինել տուաւ : Առաւօտ մը երբ դեռ նոր լուսցած էր, Մարիամ վազեց պարտէզին միւս ծայրը դնաց և մըտաւ այն դրան մէջ որ Յակոբ աղայի տունը կը ամենէր : Տան դրան մէջ կեցաւ և դրան սանդուղի քարերուն վրայ թղթի կտոր մը թողլով ուժգին կերպով դուռը բաղխեց, և կարծես թէ յանցանք մը գործած էր արագ փախչել սկսաւ : Գնաց իր պատուհանին առջեւը նստաւ որպէս զի տեսնէ թէ ինչ պիտի ըլլայ : Անկէ տեսաւ որ դուռը բացուեցաւ, և Յակոբ աղային դաժան դէմքն երեցաւ. տեսաւ նաև որ Յակոբ աղան հոն դուռած թղթի կտորն ալ առաւ, անոր վրայ իր անունը կարդալով զար-

մանօր դարձաւ, չորս կողմը նայեցաւ որ անոր ուրիշ գալը հասկնայ: Ապա Յակոբ աղա թողլի՞ր բացաւ և կարմիր հողաթափներուն կապուած փոքրիկ տոմսակը կարգաց, և Մարիամ շատ աղէկ գիտէր որ Յակոբ աղա հոն գրուած հեռուեալ խօսքը կը կարգար. «Առ Յակոբ աղա իր փոքրիկ բարեկամ Մարիամէն»: Յակոբ աղա մէկէն դուռը դոցեց ներս մտաւ, և Մարիամ այլ ևս չտեսաւ թէ ինչ եղաւ: Բայց եթէ կարելի ըլլար աւելի տեսնել, Մարիամ պիտի տեսնէր թէ այն մարդն երբ իր մենաւոր սենեակը մտաւ, աչքերն արտասուօք լցուած էին:

Այն երեկոյ երբ արեւը մարը մըտաւ, Յակոբ աղա Մարիամին սպիտակ շնիկ մը բերաւ, նման անոր զոր սպաննած էր. այս փոքրիկ շան հետ բերած էր նաև մեծ պաճուճապատանք մըն ալ որոյ աչքերը կը դոցուէին երբ անկողնի մէջ դրուէր: Մարիամ շատ ուրախ էր որ Յակոբ աղան պատժելու համար Սողոմոնի և ոչ իր ճամբուն հետեւեցաւ: (2.)

**ԿԵՆԱՅ ԿԱՐՃՈՒԹԻՒՆԸ**

Շատ իմաստուն մարդիկ այս կենաց վրայ դրած ատեն, անոր կարճութիւնը բացատրելու համար այլ և այլ բազմաթիւ հոգեբանական գործեր հարկ տեսնելով, որոնց մէջ ևս արագընթաց նաև մը կը նմանի, ըսած են: Նոյնպէս կենանքը նմանցուցած են որսին վրայ խոյացող արծուոյ մը, կամ աղեղէնջ ելած նետի մը որոյ թռչելը մարդ չկրնար տեսնել: Նաև կենանքը ծաղիկ մ'է որ արևն իր վրայ եկածին պէս կը թառամի: Կենանքն անձրևի ատեն երեցած ծիածան, ձմերային ամպոյ մէջ արեւուն մէկ պայծառ նշույլը, ստուեր մը, երազ մը, լեռան մը կողմէն վար վազող հեղեղ մը, պղպղակ մը, դիշերոյ վերջին ժամն է ըսած են: Եթէ կենանքն այսպիսի կարճ է որ իմաստուն մարդիկ այսպիսի նմանութիւններ կը գործածեն անոր կարճութիւնը ցուցնելու, դուք տղայք, պատրաստ եղէք ուրեմն այս կենաց վախճանին, և ջանացէք Աստուծոյ տղոց վայելուչ կերպով ապրել որ, երբ այս կենանքը լինայ, իրենց տունը վերադարձող տղոյ պէս երթաք ձեր երկնաւոր Հօրը:



ՅՂ ԱՅԻՆ ԿԵՆԱՆԵՐԸ ՉՈՐՍ ՉՈՐԲԸ ԿԵՆԵ

1. Սիմոն (եղած էր վառարանին բով ուր ջրով լեցուն սան մը կ'եռարէրք սանէն դուրս ելած շոգիին ձայնը լսեց, «Մայրիկ,» ըսաւ Սիմոն, սանը շունչ առած տեղէն ձայն կը հանէ, և անոր շունչը ծուրի կը նմանի, ինչպէս իմն ձմեռ ատեն: Մայրն ըսաւ, «Եունչ առնելու ձայն չէ զոր դուն կը լսես, նայ իսկ այն ջրոյն եռալուն ձայնն է:» Այս միջոցին Ստեփան աղա, Սիմոնին հայրը, ներս սենեակը մտաւ և ըսաւ, «Այն ծուրը զոր կը տեսնես սանէն ելած ջուրէ, և կրակը այդ ջուրն օդին մէջ շունչ է, երբ զգեստդ անձրեւէն թրջած էր, տեսա՞ր թէ ինչպէս կրակն անոր վրայէն ջուրն առաւ և անյայտ ըրաւ:» «Այ,» ըսաւ Սիմոն, «Տիչք ասոր պէս ծուրս եղաւ:» «Այս սանին վրայ նայէ հիմա» ըսաւ Ստեփան Աղա, և ունեցիով անկողնէ խըցան մ'առնելով զայն սանին բաց տեղը դրաւ նոյնպէս որ խցանը այն տեղը մ'ամրացանք մնաց: Առջի բերան շոգին դուրս ելլելէ դադարեցաւ, բայց քիչ մ'ետքը սանին խուփը իբրև թէ կենդանի եղած ըլլաւ: յանկարծ վեր ցատկելով և իր տակէն շատկէկ շոգի դուրս հանելով Սիմոնը զարմացուց: «Շոգին այնպիսի դորաւոր է որ սանին երկաթեայ խուփը վերցուց,» ըսաւ Սիմոնին հայրը, «և եթէ այն խուփը այնպէս ամուր հաստատուած ըլլար որ շոգին չկրնար զայն մէկդի նետել, այն ատեն սանը պիտի պայթեցնէր: Եոզին է որ շոգեհատերն և շոգեկառքերը կը քայքայէ: Եոզին ծուրի կը նմանի, բայց երբ ամանի մը մէջ դոցուի, ամէն տեսակ բան ընելու կարող է: Սակայն և այնպէս քիչ մը ջուր միայն յառաջ կը բերէ այս շոգին, որ շատ անտակ բաներ կրնայ ընել: Կ'ուզեմ որ հիմա ուրիշ բաներ ալ տեսնես զորս ջուրը կ'ընէ:»


2. Սիմոն հօրը հետ փողոցի դուռը գնաց, ջուրը փողոցէն ի վար փոքր հեղեղի մը պէս ատկաւին կը վազէր, թէև անձրևը դադարած էր: «Հոս նայէ,» ըսաւ Ստեփան աղա, Սիմոն նայեցաւ, սակայն բաց-ք քիչ մը պղտոր ջուրէն առնելու չտեսաւ: ջուրն վրայ

փայտի, յարդի և թղթի կտորներ կային որ հոսանքն ի վար կը քշուէին կ'երթային: Ստեփան աղա ըսաւ Սիմոնին, «Դուն ըսիր թէ այս ջուրը անձրևէն առաջ եկածն է ուրեմն ինչէն այսպէս պղտոր է. անձրևի ջուրը միշտ յառակ կ'ըլլայ:» Սիմոն պատճառը չգիտացաւ. ուստի հայրն անոր ըսաւ որ այն ջուրէն քիչ մը դաւաթի մը մէջ առնէ, երբ ջուրը գաւաթին մէջ քիչ մը մնաց, առջինէն նուազ պղտոր երևցաւ. բայց գաւաթին տակը թմանք և դեղին սկի

մը գոյացաւ: «Նայէ,» ըսաւ Ստեփան աղա, «դեղին սկիւն է որ ջուրը պղտորած է, և այս դեղին սկիւն ալ երկրէն կամ հողէն է. ամէն անգամ որ անձրև կու գայ, ջուրը տեղէ մը հող կ'առնէ, և ուրիշ տեղ կը տանի: Այս բանը քեզ ցուցնել կուզէի, Հիմա եկ, դեռ երթանք և անոր նայինք:»

3. Լեռանը անձրևն արայ անձրևն աւելի սաստիկ տեղացած և գետը յորդելով կամուրջը քշած էր. ուստի մեծ բազմութիւն մը դեռին եղերքը ժողոված ջուրին սաստիկ թեմաք վազելուն կը նայէին: Տախտակներ, խոտի և յարդի դէղեր, ծառի ճիւղեր և ամբողջ ծառեր ջուրին հոսանքն ի վերջնաստիկ զլտորելով կ'երթային, և ջուրը շատ բարձր և պղտոր էր: Հոն կեցող մարդոցմէ ամանք կ'ըսէին թէ հեղեղը գետին ափանց վրայ գտնուած արտերուն մեծ վնաս հասցոյ:»

4. «Նայէ, հայրիկ,» ըսաւ Սիմոն, «այս ալ մեր փողոցի հեղեղին կը նմանի. երկուքն մէջտեղ այս տարբերութիւնը միայն կայ, որ մեր փողոցի հեղեղը յարդեր կ'առնէ կը տանի, իսկ այս գետը մեծ ծառեր կը քշէ:» «Այ,» ըսաւ Ստեփան աղա, «ջուրն ինչ որ կ'ընէր մեր փողոցին մէջ, նոյն բանը կ'ընէ հոս ալ. երկուքն ալ հող կը քշեն կը տանին, և երկուքն ալ իրենց այն քշած հողը կը թողուն, երբ այնպիսի տեղ մը կու գան ուր հոսանքը չկայ. այն հողը որ այս ջուրն այնպիսի դեղին ներկած է, այս առաւօտ Ալէմ տաղին էր և երեք օր չանցած Գաբակեօլ լիճին մէջ պիտի գտնուի:» Այսպէս ամէն կաթիլ ջուր լեռնէն հող առնելով կը տանի, և այնպէս լեռան բարձրութիւնն և լիճին խորութիւնը հետզհետէ կը քիչնան. այսինքն երթալով լեռը կը հարթանայ և լիճը կը լեցուի: Եւ այն դորութիւնը որ այս բաները կ'ընէ, ամպերէն եկած ջուրն է: Ամպերն ալ ջուրէ դոյացած են, ջուրն արևուն տաքութեամբ օդին մէջ լուծուելով ամպ կ'ըլլայ, և այս հեղեղը պատճառող ամպերը թերևս բուն այս գետին ջուրէն գոյացած են:



ուամանք կը սորվիս, և կը փափաքիս աւելի սորվելու. այսչափ ուամանք սորվելով ինչ ընել կը խորհիս: Սրբուհի ինձ պատասխանեց. «Կ'ուզեմ ուամանք սորվել որդե՛ս դեռ որդի մը քաշի ընե՛ս:»

Արդարեւ լաւ նպատակ է այս: Մեր Տէր Յիսուս Քրիստոս ալ աշխարհ եկաւ բարեք ընելու համար: Գուն ալ այս մասին անոր նմանելու կը ջանաս. Ի՞նչ է նպատակդ այս աշխարհի մէջ:

**ՎԵՅ ԿՈՆՈՂՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵՍԱՅ ՊՈՏՏՆԵԱՅ ՀԱՄԱՐ**

1. Ամէն օր առանձին աշօթք բրէ. յիշելով որ երբ դուն կը խօսիս, Աստուած քու հետք է և ազօթքդ կը լսէ (Եբ. ԺԱ. 6):

2. Ամէն օր առանձին Աստուածաշունչ կարդա, և երբ կը կարդաս, յիշէ թէ Աստուած քեզ կը խօսի Աստուածաշունչի խօսքերով: Միաբոլ քեզ նաեւ թէ ինչ որ այն Սուրբ մատենին մէջ ըստած է ընելու պարտաւոր ես: Այս երկու կանոնները շատ կարեւոր են, և եթէ մէկը զատնք զանց ընէ, խղճի խայթ կ'ունենայ:

3. Ամէն գեշեր երբ կը յիշես թէ Յիսուս ինչ ըրաւ քեզի համար, խորհէ նաեւ թէ դուն այն օր ինչ բրբր անոր համար, և օր մը չանցնես առանց բան մ'ընելու անոր համար (Մատթ. Ե. 13-16):

4. Երբ երբէք բանի մը համար կը կասկածիս թէ ուզիդ չէ, մի ընծր զայն, այլ նախ դնա առանձնակի սենեակդ մտիք և խնդրէ Աստուծմէ որ քեզ սորվեցնէ թէ այն բանն ուզիդ է, և ապա գործէ: Եթէ չես համարձակիր խնդրել Աստուծմէ որ քու մէկ գործիդ համար քեզ օրհնէ, ստոյգ գիտցիր որ այն բանն ուզիդ չէ (Հրեոսով. ԺԳ. 23):

5. Մի խորհիր թէ բարի Քրիստոնեայ մի ես, վասն զի ուրիշ Քրիստոնէից օրինակը քեզ առաջնորդ կը բռնես: Առաջնորդ բռնէ քեզի զՔրիստոս. Քրիստոնեայք սխալներ կը գործեն: Նմանելու օրինակը Յիսուս Քրիստոսի կեանքն է, որուն մէջ երբէք սխալմունք չկայ:

6. Բնաւ մի հաւատար թէ ճշմարիտ է խորհուրդդ եթէ անհամաձայն է Աստուծոյ խօսքին: Եթէ այս երկուքը իրարու համաձայն չեն, խորհուրդդ թող, և Աստուծոյ խօսքին հաւատայ:

**ԵՐՈՒՍՏՂԷՄԻ ՄԵԿ ՏԵՍԱՐԱՆԸ**


Երբ ուխտաւորք երուսաղէմ կ'երթան, հոն շատ բաներ կը տեսնեն, որոնցմէ մէկն ալ այս է: Վերի պառկերին տակը տեսնուած չուրն այն աւազաններուն մէկն է զոր Հրեայ թագաւորք շինած էին չուր համբարերու համար երուսաղէմ: Այս աւազանն այժմ Պերէթ հոմօ կը կոչուի, քանզի չուրը քաղքին բազանեաց համար կը գործածուի: Կ'ըսուի թէ այս աւազանը շինեց Եզեկիա թագաւորը որուն վրայով դուք Աստուածաշունչի մէջ կարգացած ըլլալու էք: Բոց ապէ կը տեսնուի նաեւ եկեղեցւոյ մը գմբէթը: Այս եկեղեցին շինուած է հոն ուր կ'ըսուի թէ Քրիստոսի մարմինը թաղուեցաւ գերեզմանի մը մէջ ուր ուրիշ մարդ թաղուած չէր: Այս եկեղեցին միշտ շատ բազմութեամբ կը լեցուի, մանաւանդ զատիկ տառն: Այն ատեն այլեայլ ազգերէ ու կրօնքէ այնչափ շատ բազմութիւն կը գտնուի եկեղեցւոյն մէջ, որ հարկ կ'ընայ ստիկաններ կոչել որպէս զի զօրաւորները տկարները ստնակիս չընեն:

Պատկերին ալ կողմի ծայրը հեռուէն կը տեսնուի Զիթենեաց լեռան մէկ գագաթը: Մեր Տէրը Յիսուս սովորութիւն բրած էր իրիկուններն ազօթելու համար այս լեռն ելլել, քանզի ստճարին մէջ այնչափ շատ աղմուկ և ձայն կ'ըլլար, որ Աստուծոյ ազօթելու համար մարդ չէր կրնար հոն հանգար ըլլալ: Ճշմարիտ Քրիստոնեայ մը երբ սուրբ գերեզմանի եկեղեցւոյն մէջ կը գտնուի, և հոն ժողովրդեան աղմուկն և վիճը կը տեսնէ, անտարակոյս պիտի յիշէ այն խօսքը զոր մեր Տէրը Յիսուս ըստու Հրէից նախնի ստճարին համար: Այսպիսի ուխտաւոր մը բերկրութեամբ խոյս կու տայ քաղքէն, որ այս լեռան պէս խաղաղաւէտ տեղ մը գտնէ, ուր ազօթելով կարենայ իր հոգւոյն համար հանգիստ գտնել:

**ԻՆՉ Է ՆՊՈՏՏԱԿԻ**

Անցեալ օր Սրբուհիի հետ անոր ուամանքը վրայ խօսելով տեսայ որ նա շատ բան սորվիլ կ'ուզէր: Անոր հարցուցի. «Ինչու այսչափ շատ

Բ Ե Բ Գ Ը Պ Ա Հ Ե Ց Ե Գ



1. Բաջ ե - ղէք, ով եզրայր-նե-րըս, մերձ է օգ-նու-թիւն. վե-րը կ'ե-րեւ-նայ նը - շա-նը, Ստոյգ է յաղ-թու - թիւն.



«Շուտ կու-գամ», կ'ը-սէ մեր Տէ-րը, « բերդը պա-հե-ցէք. » կը պա-հե՛նք, Տէր, քու շնորհքովդ. » Պատասխան տը-ւէք.



2

Մեր յանդուգն թշնամիները  
Բազմութեամբ կու գան,  
Եւ անոնց չար զօրապետը  
Ինքն է սատանան.  
«Շուտ կու գամ, եւն»

5

Պանծալի է մեր դրօշակը,  
Փողը կը լսենք.  
Մեր Զօրապետին անուամբը  
Պիտ 'անշուշտ յաղթենք.  
«Շուտ կու գամ, եւն»

4

Դառն 'ւերկար է պատերազմը,  
Սակայն դիմացէք.  
Մեր անյաղթ Զօրազըլուխը  
Մօտ է, քաջ եղէք.  
«Շուտ կու գամ, եւն»

«ԲԵՐԳԸ ՊԱՀԵՑԵՂ»

Հետեւեալ պատմութիւնը գրողը 1864ին Ամերիկայի զօրաբանակներէն մէկուն մէջն էր: Այս զօրաբանակն օգնութեան կ'երթար բերդի մը, որոյ պահապան զօրքը տանապատիկ աւելի բազմաթիւ թշնամիէ մը պաշարուած էին: Թշնամին բերդին վրայ յարձակելով անոր մէջ մտնել կուզէր, քանզի բերդին մէջ զօրաբանակին համար ամուսն մը պաշար կար: Բերդին պահապան զօրքը յուսահատ վիճակի մէջ էին, քանզի մենք տակաւին երկու օրուան ճամբայ հեռի էինք: Այս միջոցին բարձր լեռան մը գլուխը հասանք, ուսկից բերդը կը տեսնուէր, մեր զօրապետը շատոց դրօշակներով նշանացի հազարգակցութիւն ընել բերդին պաշարեալ պահապան զօրաց հետ, հոսկ ուրեմն դժուարաւ կըրցաւ անոնց ուշադրութիւնը դրաւել, և լեռան գլուխէն նշանացի խնդուց տանոց այս խօսքը. «Բերդը պահեցէք, ահա ես կու գամ»:» Եւ պահապան զօրքն որ շարտար պաշարուած ըլլալով մեծ նեղութեան մէջ էին, այս բանէն քաջալերուելով բերդը պահեցին մինչեւ որ մենք հասանք և թշնամին հալածեցինք: Այս դէպքին վրայ Ամերիկացի մը Անգլիերէն երգ մը յօրինեց որուն թարգմանութիւնը հրատարակուեցաւ մեր այս թուոյն մէջ:

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԸ ԲՈՎ ՄՏԱՏՈՒԹԻՒՆ



Նիլին գերեզմանին վրայ անկենք: Ֆէնի ուրախ պիտի ըլլայ, երբ մենք անոր գերեզմանին վրայ ծաղիկ անկենք:» «Այո, ես ալ կը կարծեմ որ ուրախ պիտի ըլլայ,» ըսի, և համարեցի սիրելի մանկիկս որ միշտ մեզ կը յեշնէն իր քոյրն Ֆէնի: Մանկիկը գնաց ծաղկանց մէջտեղ խաղալ սկսաւ: Ես նստայ և խորհել սկսայ այն տխուր աւուր վրայ յորում այս փոքրիկ գերեզմանը փրուեցաւ: Ճիշդ երեք տարի յառաջ էր: Ֆէնի հազիւ հինգ ու կէս տարեկան էր: Անկէ խորհուրդս գնաց այն աւուր վրայ երբ Ֆէնի իբր չորս տարեկան էր: Արդէն սկսած էր Աստուածաշունչէն համարներ դոց սորվել: Այն օրն այս համարը կը սորվէր. «Յիսուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր և յաւիտեանս:» Երբ այս համարին վրայ կը խօսէինք, Ֆէնի կը պատմէր թէ Յիսուս աշխարհի

վրայ եղած ատեն որչափ բարի և որչափ սիրուն էր, ինչ գործ կը գործէր և ինչպէս մանրիկ տղաքը իր բազկաց մէջ առաւ, ձեռները անոնց վրայ դրաւ, և ապա ինքնին խորհելով թէ Յիսուս այսօր ալ վերն երկինքը ձիշտ այնչափ բարի և սիրուն է, ինչպէս էր այն ատեն և միշտ պիտի ըլլայ, վեր նայեցաւ և ըսաւ. «Երբ երկինք երթամ, ես շիտակ անոր գերիլ պիտի երթամ և անոր պիտի ըսեմ՝ Թող տուէք առ մանր տղոցը, և բոլոր համարներս:»

Միքելի տղայք, այսօր ես Ֆէնիի յիշատակին համար այնպիսի բան մ'ընել կ'ուզեմ որ անոր գերեզմանին վրայ ծաղիկներ անկեցին աւելի հաճելի պիտի ըլլայ անոր. ուստի այս պատմութիւնը ձեզի կ'ընեմ, աղօթեցէք որ այն զձեզ ֆրկին աւելի մօտ քաշելու միջոց ըլլայ, և քաջալերէ զձեզ որ հիմա Աստուածաշունչէն համարներ ըսէք: Քրիստոս այս համարները թանկագին քարերէ աւելի պատուական պիտի ընէ ձեզի: Պէտքէ, 17 հոկտ. 1875

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր ձ. Գ. Կրիս

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՄԵՆԿ  
Չազմագործար, Յակոբեան խան, Թիւ 12.